Նախագահ
Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության
Երկրորդ Խորհրդական



Գերագույն Համաժողով՝ ոչ սովորական օրհնություն

Եկեղեցու մի լավ անդամ խոսում էր հարևանի հետ, որը մեր հավատքից չէր: Երբ սկսեցին զրուցել գերագույն համաժողովի մասին, հարևանը հարցրեց. «Դու ասում ես, որ ունեք մարգարեներ և առաքյալնե՞ր: Եվ տարին երկու անգամ ամբողջ աշխարհում համաժողովի ժամանակ նրանք հայտնում են Աստծո խո՞սքը»:

«Ճիշտ այդպես», - վստահորեն պատասխանեց անդամը:

Հարևանը մի պահ մտածեց այդ մասին: Նա, կարծես, իսկապես հետաքրքրված էր և ապա հարցրեց. «Ի՞նչ են նրանք ասել վերջին գերագույն համաժողովի ժամանակ»:

Այդ պահին Եկեղեցու լավ անդամի ավետարանով կիսվելու ոգևորությունը վերածվեց ամոթի: Որքան էլ փորձեց, նա չկարողացավ մտաբերել գոնե մեկ ելույթի մանրամասները:

Նրա ընկերը զգաց այս մտահոգ վիճակը և ասաց. «Դու ուզում ես ինձ ասել, որ Աստված խոսում է մարդու հետ մեր օրերում և դու չես կարողանում հիշել, թե ի՞նչ Նա ասաց»:

Եղբայրը ընկճվեց այս զրույցից: Նա խոստացավ, որ ավելի լավ կփորձեր հիշել գերագույն համաժողովի ժամանակ Տիրոջ ծառաների կողմից ասված խոսքերը:

Մենք բոլորս էլ գիտենք, թե որքան դժվար է հիշել գերագույն համաժողովի յուրաքանչյուր ուղերձը, և ես վստահ եմ, որ մենք կարիք չունենք ամաչելու, եթե ամեն բան չենք հիշում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր գերագույն համաժողովի ժամանակ՝ որպես երկնային պարգև և օրհնություն, տրվում են ուղերձներ հատուկ մեր անձնական կյանքի իրավիճակների համար:

Գերագույն համաժողովին պատրաստվելու համար թույլ տվեք ինձ խորհուրդ տալ երեք հիմնական գաղափարներ, որոնք կարող են մեզ օգնել ավելի լավ ստանալ, հիշել և կիրառել Տիրոջ ծառաների կողմից ասված խոսքերը:

1. Եկեղեցու անդամները լիազորված են ստանալ անձնական հայտնություն, մինչ նրանք լսում և ուսումնասիրում են գերագույն համաժողովի ժամանակ ասված ոգեշնչված խոսքերը:

Երբ դուք պատրաստվում եք գերագույն համաժողովին, ես հրավիրում եմ ձեզ մտածել այն հարցերի մասին, որոնց պատասխանների կարիքն ունեք: Օրինակ, դուք կարող եք ցանկանալ Տիրոջ առաջնորդությունը ձեր առաջ ծառացած դժվարությունները հաղթահարելու համար:

Ձեր հատուկ աղոթքների պատասխանները կարող

են գալ անմիջապես որևէ ելույթից կամ արտահայտությունից: Այլ պահերի պատասխանները կարող են գալ, կարծես թե, առնչություն չունեցող բառից, արտահայտությունից կամ երգից: Կյանքի օրհնությունների հանդեպ երախտագիտությամբ լցված սիրտը և խորհրդին հետևելու անկեղծ ցանկությունը կպատրաստի անձնական հայտնության ուղին:

2. Մի անտեսեք ուղերձը լոկ այն պատճառով, որ այն ծանոթ է թվում:

Մարգարեները միշտ ուսուցանվել են կրկնողություններով. դա սովորելու օրենքն է: Գերագույն համաժողովի ժամանակ դուք կլսեք թեմաների և վարդապետությունների կրկնողություններ: Թույլ տվեք հավաստիացնել ձեզ՝ սա ստեղծարար մտքի կամ երևակայության պակասի արդյունք չէ: Մենք շարունակում ենք լսել ուղերձներ նմանատիպ հարցերի շուրջ, որովհետև Տերն ուսուցանում և մեր մտքում ու սրտում սերմանում է հավերժական կարևորություն ունեցող որոշակի հիմնարար սկզբունքներ, որոնք պետք է հասկացվեն և կիրառվեն, մինչև որ մենք կարողանանք անցնել այլ բաների: Իմաստուն շինարարը, մինչև պատերի և տանիքի կառուցելը, նախ հիմքն է դնում:

3. Գերագույն համաժողովի ժամանակ ասված խոսքերը պետք է կողմնացույց լինեն, որոնք մեզ ցույց են տալիս ճանապարհը եկող ամիսների ընթացքում:

Եթե մենք լսենք և հետևենք Հոգու հուշումներին, դրանք կծառայեն որպես Լիահոնա, առաջնորդելով մեզ անհայտ, դժվարին հովիտներով և լեռներով, որոնք առջևում են (տես 1 Նեփի 16):

Աշխարհի սկզբից ի վեր, Աստված բարձրացրել է մարգարեներ, ովքեր հայտնում են երկնքի կամքը իրենց ժամանակների մարդկանց: Մեր պարտականությունն է լսել և այնուհետև կիրառել ուղերձները, որոնք Տերը պատրաստում է մեզ համար:

Մեր բարեգութ և սիրող Երկնային Հայրը չի լքել և չի լքի Իր զավակներին: Այսօր, ճիշտ այնպես, ինչպես հին ժամանակներում, Նա նշանակել է առաքյալներ և մարգարեներ: Նա շարունակում է Իր խոսքը հայտնել նրանց:

Ի~նչ հրաշալի հնարավորություն է գերագույն համաժողովի ժամանակ լսել Աստծո ուղերձները՝ ուղղված յուրաքանչյուրիս: Եկեք լավ պատրաստվենք աստվածային առաջնորդության այս մեծ օրհնությանը, որը տրվում է Նրա ընտրյալ ծառաների կողմից:

Քանզի սա ոչ սովորական օրհնություն է:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

- Միասին կարդացեք ուղերձը: Խրախուսեք ընտանիքին նշել բաներ, որոնց վերաբերյալ կցանկանային լսել գերագույն համաժողովի ընթացքում:
- Որպեսզի օգնեք փոքր երեխաներին կիրառել Նախագահ Ուխդորֆի կողմից տրված խորհուրդը, ցույց տվեք նրանց Բարձրագույն Իշխանությունների նկարները (գտնվում է *Լիահոնա*–ի համաժողովի համարում): Թող նրանք իմանան, որ Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալների Քվորումը խոսելու է գերագույն համաժողովի ժամանակ: Խրախուսեք երեխաներին լսել համաժողովը և նկար նկարել, որը կօգնի նրանց հիշել իրենց սովորածը: Ծնողները կարող են այցելել conferencegames.lds.org կայքը՝ երեխաների համար համաժողովի վերաբերյալ լրացուցիչ վարժություններ գտնելու համար:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Լավ, ավելի լավ, ամենալավ

Մերի-Սելեստե Լյուիս

2007թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի իր ելույթում, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը խոսեց «լավ, ավելի լավ և ամենալավ» միջոցառումների մասին: Երբ նա հասավ «երեխաների գերզբաղված գրաֆիկի» թեմային, ես իմ տեղում նստած մի տեսակ ճնշվեցի մեղավորության զգացումից:

Ես գիտեի, որ չափից ավելին եմ անում: Ես մասնակցում էի դպրոցական մրցումներին, դպրոցում մասնակցելով դժվար դասերի, և ներգրավված էի մի շարք այլ միջոցառումներում: Ես հավատարմորեն չէի այցելում Երիտասարդ Կանանց միջոցառումներին, և իմ կիրակիները լի էին վերջին

ռոպեին տնային աշխատանքը կատարել փորձելու ստրեսային վիճակներով: Երաժշտության փորձերն ու դպրոցական թերթի խմբագրումը կորցրել էին իրենց հետաքրքրությունը և դարձել աշխատանք:

Երեց Օուքսի ելույթը ինձ ստիպեց վերանայել իմ գրաֆիկը: Միջոցառումները, որոնց ես մասնակցում էի, լավն էին, բայց շատ էին: Ես պետք է ընտրեի լավագույնները: Մինչ ես փորձում էի որոշել, թե որ միջոցառումները թողնել, ես հասկացա, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը լավագույն առաջնահերթությունն է, որ որևէ մեկը կարող է ունենալ: Ես դրեցի աղոթքն ու սուրբ գրությունների ընթերցանությունը իմ ցուցակի վերևում, և այդ պահից սկսած իմ կյանքը ավելի հարթ ընթացավ:

Երեց Օուքսը սովորեցրեց ինձ, որ երբ մենք անում ենք այն, ինչ Տերն ուզում է, որ մենք *առաջինը* անենք, մնացած բոլոր բաները պարզորոշ կերպով իրենց տեղն են ընկնում: Եթե ես ուսումնասիրեմ իմ սուրբ գրությունները մինչև խաղեր խաղալը կամ նույնիսկ մինչև իմ տնային աշխատանքների կատարելը, յուրաքանչյուր կարևոր բան կարվի: Երբ ես իմ կյանքը հիմնում եմ Տիրոջ վրա, որպես ուշացած միտք Նրան ավելացնելու փոխարեն, իմ կյանքն ունենում է խաղաղության և հաջողության ավելացված չափ:

Այժմ ես շատ ուշադիր եմ լսում գերագույն համաժողովի ժամանակ տրված խորհրդին:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ես կարող եմ պատասխաններ գտնել գերագույն համաժողովի միջոցով

Նախագահ Ուխդորֆը սովորեցնում է, որ եթե դուք մտածում եք որոշ հարցերի շուրջ գերագույն համաժողովից առաջ, Տերը կարող է գերագույն համաժողովի ժամանակ խոսել ձեզ հետ Իր մարգարեների և առաքյալների միջոցով:

1. Ընտանիքով կամ դասարանով քննարկեք, թե ինչ սովորելու կարիք ունեք՝ անհատապես: (Օրինակ՝ Ինչպե՞ս ամրացնեմ իմ վկայությունը: Ինչպե՞ս լուծեմ իմ խնդիրները դպրոցում): Թղթի մի կտորի վրա կամ ձեր օրագրում գրի առեք ձեր հարցերը:
2. Համաժողովին նախորդող շաբաթների ընթացքում դուք կարող եք մտածել և աղոթել այս հարցերի վերաբերյալ:
3. Համաժողովի ընթացքում ուշադիր լսեք (դա կարող է օգնել գրառումներ կատարել): Այնուհետև գրեք, թե ինչպես Տերը, Եկեղեցու ղեկավարների միջոցով, պատասխանեց ձեր հարցերին:
4. Մեկ այլ թերթիկի վրա դուք կարող եք նկարել նկար, որտեղ անում եք այն, ինչ սովորել եք:

© 20110 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *First Presidency Message, September 2011*-ի թարգմանությունը: Armenian. 09769 201

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Ամրացնել ընտանիքները հոգևոր հատկանիշների աճի շնորհիվ

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Ջուլի Բ. Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, ասել է. «Իմ մեջ անհաղթահարելի վկայություն է աճել Աստծո դուստրերի արժեքի մասին: . . . Ես զգացել եմ, որ երբեք հավատքի և անձնական արդարակեցության ավելի մեծ կարիք չի եղել: Երբեք ամուր ընտանիքների և տների ավելի մեծ կարիք չի եղել»:

Քույրերը կարող են օգնել ստեղծել ամուր տներ և ընտանիքներ, եթե նրանք գործեն ըստ անձնական հայտնության: «Անձնական հայտնությանը արժանանալու, այն ստանալու և ըստ դրա գործելու ունակությունը այն եզակի ամենակարևոր ունակությունն է, որը կարող է ձեռք բերվել այս կյանքում», - շարունակում է Քույր Բեքը: «Տիրոջ Հոգուն արժանանալու համար պետք է փափագել Հոգին և ունենալ որոշակի չափի արժանավորություն: Պատվիրանները պահելը, ապաշխարությունը և մկրտության ժամանակ կապած ուխտերի նորոգումը, շնորհում է Տիրոջ Հոգին միշտ մեզ հետ ունենալու օրինությունը: Տաճարային ուխտեր կապելն ու պահելը ևս հոգևոր ուժ և զորություն են ավելացնում կնոջ կյանքում: Դժվար հարցերի շատ պատասխաններ են ստացվում սուրբ գրություններն ընթերցելիս, քանի որ սուրբ գրությունները նպաստում են հայտնության: . . . Ամենօրյա աղոթքը ևս կարևոր է Տիրոջ Հոգին մեզ հետ ունենալու համար»:[1]

Մենք նաև ամրացնում ենք մեր ընտանիքի անդամների հոգևոր հատկանիշները, երբ օգնում ենք նրանց հասկանալ Երկնային Հոր հավերժական ծրագիրը: «Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի հոգևոր առումով ավելի լավ պատրաստենք մեր երեխաներին իրենց հավերժական դերերին», - հարցնում է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը: «Հավանաբար ամենաընդգրկող պատասխանը հետևյալն է՝ Սովորեցնել նրանց, թե ինչպես ապրել ավետարանի սկզբունքներով»: Այս ուսուցումը գալիս է ամենօրյա աղոթքների, սուրբ գրությունների ուսումնասիրության և ընտանիքով ճաշելու ժամերին զրուցելու միջոցով, ինչպես նաև շաբաթական ընտանեկան երեկոների և Եկեղեցի հաճախելու միջոցով: Երեց Բալլարդը բացատրում է. «Մենք պատրաստվում ենք ամեն օր, հենց հիմա, հավերժական կյանքին: Եթե մենք չենք պատրաստվում հավերժական կյանքին, ապա մենք պատրաստվում ենք որևէ ցածր բանի, հավանաբար որևէ շատ ցածր բանի համար»:[2]

Սուրբ գրություններից

Առակաց ԻԲ.6, Ա Հովհաննես Գ.22, Վարդապետություն և Ուխտեր 11.13–14, 19.38, 68.25

Մեր պատմությունից

Մարգարե Ջոզեֆ Սմիթը՝ 1842թ. ապրիլի Սփոփող Միության ժողովի ժամանակ սովորեցրել է քույրերին, որ նրանք ունեն հանդիսավոր պարտավորություն՝ փնտրել իրենց անձնական փրկությունը: Նա ասել է. «[Իմ] հրահանգներից հետո դուք պատասխանատու կլինեք ձեր մեղքերի համար, դա ցանկալի պատիվ է, որ դուք այնպես քայլեք մեր երկնային Հոր առջև, որպեսզի փրկեք ինքներդ ձեզ, մենք բոլորս պատասխանատու ենք Աստծո առաջ նրա համար, թե ինչպես ենք կատարելագործում այն լույսն ու իմաստությունը, որոնք տրված են մեզ մեր Տիրոջ կողմից, որպեսզի կարողանանք փրկել ինքներս մեզ»:[3] Նա ուսուցանեց նրանց լինել արդար անհատներ, դառնալ սուրբ ժողովուրդ և պատրաստվել տաճարային արարողություններին և ուխտերին:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջուլի Բ. Բեք, «Եվ աղախինների վրա էլ պիտի թափեմ այն օրերը իմ հոգին», *Լիահոնա,* Մայիս 2010, 10, 11:
2. M. Russell Ballard, “Spiritual Development,” *Ensign,* Nov. 1978, 65, 66.
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 379:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս ես կարող եմ օգնել իմ քույրերին մեծացնել հոգևոր ինքնավստահությունը:

2. Ինչպե՞ս ես կարող եմ մեծացնել Սուրբ Հոգուն ճանաչելու և արձագանքելու իմ կարողությունը:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org.

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Visiting Teaching Message, September 2011*-ի թարգմանությունը: Armenian. 09769 201